

**XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ.
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ**

XIX դարի 90-ական թթ. հասարակական նոր հարաբերությունների զարգացման շարժընթացում կարևոր տեղ են գրավում ժամանակի գրականությանն աղերսվող մի շարք խնդիրներ: Ցավալի իրողություն էր, սակայն, որ գրականությունը կաղապարված էր հասարակական հոսանքների գաղափարական սահմանագծումների տիրույթներում: «Որքան էլ գրականությունը ձեռքում էր հասարակական հոսանքների գաղափարական կապանքները,- գրում է Ս. Սարինյանը,- որքան էլ գրողներն իրենց արվեստը դուրս էին բերում մամուլի այս կամ այն ուղղության նեղ սահմաններից, այսուհանդերձ, գրական կյանքը, գրական շարժումը գրողների աշխարհայացքային կողմնորոշումներն ու հասարակական հայեցողությունը մի ինչ-որ չափով ենթական էր մնում այն մտայնությանը, ինչ պարտադրում էր տվյալ հասարակական հոսանքի ու մամուլի ուղղությունը»:¹

Լեոն Թումանյանի մասին հուշերում բավական բացորոշ և հանգամանալից է նկարագրում ստեղծված մթնոլորտը՝ ընդգծելով, որ Թիֆլիսում հրատարակվող 5-6 պարբերականներից յուրաքանչյուրը, օտարված մյուսներից, իր շուրջն էր համախմբում կողմնակիցների որոշակի խմբի: Նրանց միավորողը, սակայն, գաղափարական ուղղությունն ու միտվածությունը չէր: «Այն ժամանակ գոյություն ունեին միայն երկու խոշոր ուղղություններ՝ առաջադիմական և պահպանողական,- գրում է Լեոն:- Նրանց մեջ գոյություն ուներ անհաշտ թշնամություն, որ արգելում էր որևէ մերձեցում նույնիսկ մասնավոր անձնական հարաբերությունների հողի վրա»:² Ստեղծված մթնոլորտի պատճառը Լեոն բացատրում է նրանով, որ ժամանակի գրական ասպարեզի միակ տեղը դարձել էր հրապարակախոսությունը, որին «դեռ շարունակում էր ստրկացած մնալ» «բուն գրականությունը»: Ինքնուրույ-

1 Սարինյան Ս., Հայ քննադատության պատմություն, հտ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 6:

2 Լեոն, Երկերի ժողովածու՝ 10 հատորով, հտ. 8, Երևան, «Հայաստան» հրատ., 1985, էջ 420:

նություն դրսևորելու փորձերը տվյալ գրողին դարձնում էր այս կամ այն «թայֆայական» ընկերության «երդվյալ» թշնամին: Ակնառու օրինակ է «Մշակի» երկարամյա ոչ բարյացակամ և անհանդուրժող վերաբերմունքը Թումանյանի հանդեպ. թերթը կանխակալ վերաբերմունք է ունեցել այն ամենի նկատմամբ, ինչ ուղղակիորեն կապվել է Թումանյանի անձի, ստեղծագործական աշխարհի, քաղաքական, հասարակական գործունեության հետ:

Այսպիսով՝ հասարակական հոսանքների և նրանց ներկայացուցիչ հանդիսացող մամուլի գեղագիտական սկզբունքները, գրականությանը պարտադրած օրենքները հաճախ հակադրվում էին իրական գեղարվեստի չափանիշներին: Մտավորականության նոր սերունդը ոչ միայն սկսում է որոշակիորեն բարձրաձայնել գրականության «ազատագրման» և առողջ քննադատությամբ այն արժևորելու անհրաժեշտության մասին՝ տարբեր առիթներով բազմիցս անդադառնալով այս և գրականության ու քննադատության այլ խնդիրների, այլև ձեռնարկում է քայլեր առաջադիր հարցերի շուտափույթ լուծման համար:

1890-ական թթ. տեսականորեն և գործնականորեն տեղի է ունենում հայ գրականության և քննադատության «տարանջատում» հասարակական-քաղաքական հոսանքներից: Իհարկե, որոշակի ժամանակ էր պահանջվում ամբողջական և լիարժեք կերպով ձերբազատվելու վերջիններիս ազդեցությունից:

Գիտակցական իմաստավորմամբ գրականությունն աստիճանաբար ձևավորվում է իբրև առանձին օրգանական միավոր, որ այս դեպքում արդեն ինքնաբերաբար ենթադրում է մեկ այլ անկախ միավորի՝ քննադատության գոյությունը: Գրեթե նույն անցումային ինքնորոշումների ծանապարհն է անցնում նաև քննադատությունը, որ փորձում է զատորոշել իր ուսումնասիրության տիրույթը, առարկան, խնդիրները, յուրացնել տեսական գրականության կարևոր դրույթները, որոշակի փաստարկներով մեկնաբանել արվեստի տարբեր ճյուղերին վերաբերող այս կամ այն հարցը: Հասկանալի է՝ գրականությունն իր զարգացման ընթացքում քննադատության առջև ուրվագծում է նորանոր պահանջներ, մոտեցումներ, հարցադրումներ, մեթոդներ: Սակայն անկեղծ ու միայն գեղարվեստի չափանիշներով առաջնորդվող քննադատության համար պահանջվում էր ժամանակ: Սա չի նշանակում, անշուշտ, թե ասպարեզում դեռևս չկային այնպիսի դեմքեր, որոնք իրապես և ըստ արժանվույն էին կատարում քննադատի իրենց պարտականությունը:

ուշագրավ է, որ արևելահայ քննադատական մտքի արտահայտման կարևոր միջոցներ են դառնում «Մուրձ», «Տարագ», «Լոր Դար», «Մշակ» և այլ հանդեսներ ու թերթեր, որտեղ սկսում են պարբերաբար հանդես գալ ժամանակի գրողներն ու բանաստեղծները: Սակայն, ինչպես նկատում է Ս. Հարությունյանը, «90-ական թվականների հայ բանաստեղծության հաստատուն վերելքը գրական քննադատության մեջ միատեսակ չէր արձագանքվում: Գրական տարբեր երևույթները գրաքննադատության մեջ առաջ էին բերում մտքերի բախում, հաստատումներ ու մերժումներ»:³

Գրական-քննադատական հենց այս մթնոլորտում է առաջին անգամ հանդես գալիս Թումանյանը: Նրա ստեղծագործությունները գրաքննադատության թիրախում հայտնվում են տարբեր աղիթներով և կախված քննադատների գեղագիտական հայացքներից, կուսակցական դիրքորոշումներից, մարդկային ու բարոյական որակներից՝ դրանք քննվում և ուսումնասիրվում են տարբեր խորություններով ու մեթոդներով:

Հ. Թումանյանի գրական մուտքը ազդարարվում է 1890 թ. «Բանաստեղծություններ» անդրանիկ գրքով: Քննադատությունն աննկատ չի թողնում ժողովածուն. 1890 թ. «Մշակի» հմ. 138-ում տպագրվում է Ազ-Լերի (Խ. Մալումյան) «Ակնարկներ» միտումնավոր հոդվածը: Հեղինակը հեզնական ոճով անդրադառնում է «սունկի պես բուսնող» բանաստեղծներին՝ նրանց մեջ մատնանշելով նաև Թումանյանին:⁴ Տարիներ անց այդ օրերի մասին Թումանյանը գրում է. «Մեր մամուլը, որ կարծում էր, թե բանաստեղծությունը Ս. Ծահագիզի ու Գամառ-Քաթիպայի հետ լոեց կամ Դուրյանի ու Պեշիկթաշյանի հետ մեռավ, շատ զարմացավ ու զայրացավ այս ջահելների ձայնից և գլխարկը դրեց փայտի ծայրին ու այնպես դուրս եկավ այս նորելուկ խմբի առաջ: Նա կենսական ոչ մի շարժառիթ չորոնեց, ներքին ոչ մի արժանիք չտեսավ կյանքի, գրականության և այս նոր հոսանքի մեջ, ոչ մի կապ չնկատեց, և այս երևույթը բացատրեց փառասիրական տենչով և նրանով, թե հեշտ է ոտանավոր թխել, հանգերի տակ մթագնել, ծած-

3 Հայ քննադատության պատմություն, հտ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 54:

4 1891թ. օգոստոսի 13-ին «Մշակում» տպագրվում է Ասիացու (Գր. Արծրունու) ֆելիետոնը, որտեղ ծաղրի է ենթարկվում Թումանյանի «Կուրծք երբեմն եռ է գալիս և հուզվում...» բանաստեղծությունը:

կել ամեն մի հիմարություն ու... դառնալ բանաստեղծ... Սկսեցին մի անողորմ արշավանք...»:⁵

Իհարկե, նույն ժամանակահատվածում տպագրվում են նաև Մ. Արեղյանի և Լ. Մանվելյանի բավական լուրջ և արժեքավոր գրախոսականները, որոնց մեջ ընդգծվում են Թումանյանի տաղանդի ինքնատիպությունն ու ժողովրդայնությունը: «Նա իր պոեմաների մեջ նման չէ ո՛չ մեր հին, ո՛չ նոր բանաստեղծներին,- գրում է Լ. Մանվելյանը⁶,- նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրույն է, նա մի տեսակ նորություն է մեզ համար: Այդ առանձնահատկությունը ժողովրդական տարրն է, որ և կազմում է նորա միպական ոտանավորների իսկական զարկերակը»:⁷

1891 թ. «Մուրձի» խմբագիր Ավ. Արասխանյանը Թումանյանին հրավիրում է աշխատակցելու հանդեսին: 1893 թ. հունվարի 15-ին Թիֆլիսի «Новое обозрение» ռուսալեզու լրագրի հմ. 3115-ում Ծիրվանզադեն «Լրագրային դիտողություններ» հոդվածում ընդգծում է «Մուրձի» կարևոր դերը երիտասարդության մեջ «գրական թարմ ուժեր» գտնելու գործում: Ի թիվս այլ հեղինակների՝ հոդվածագիրը նշում է նաև Թումանյանի անունը: « «Մուրձում» բանաստեղծություններ տպագրող բազմաթիվ անձանցից առայժմ ընթերցող հասարակության ուշադրությանն են արժանանում երկուսը՝ պ. պ. Հովհ. Թումանյանցը և մասամբ Լ. Մանվելյանցը»:⁸ Խստապահանջ քննադատը նկատում է, որ Թումանյանի «մի ամբողջ շարք մեծ ու փոքր բանաստեղծությունների մեջ հանդիպում են նաև այնպիսիները, որոնք զուրկ չեն պոեզիայից: Նրանցում տեղ են գտել անկեղծ զգացմունքներ և ազնիվ պորթկումների փայլատակումներ»:⁹ Ստեղծագործությունների հիմնական արժանիքը Ծիրվանզադեն համարում է «բնականությունն ու պարզությունը»:

5 Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հտ. 6 (լրացուցիչ), Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 107:

6 «Մուրձի» հմ. 1-ում տպագրվում է Լ. Մանվելյանի «Մեր նոր բանաստեղծներին» ոտանավորը: Հեղինակը նոր բանաստեղծներին կոչ է անում երգել խրոխտ՝ ուշադրություն չդարձնելով «կռան» ագաժներին, «մաղձով լցված» թշնամիներին:

7 «Մուրձ», հմ. 1, Թիֆլիս, 1891, էջ 95:

8 Ծիրվանզադե, Երկերի ժողովածու, հտ. 10, Երևան, Հայպետհրատ, 1962, էջ 135:

9 Նույն տեղում:

Նույն ամսին «Մուրճի» հմ. 3-ում տպագրվում է Ղ. Աղայանի «Հովհ. Թումանյանի «Անուշ»-ից մի ձաշակ» փոքրիկ հոդվածը: Գրախոսը մատնանշում և արժևորում է բանաստեղծ-ծննդավայր-ժողովուրդ անտրոհելի կապը՝ խոսքը մասնավորեցնելով «Անուշ» պոեմի շուրջ: Նկատենք, որ սա Թումանյանի «Բանաստեղծություններ» երկրորդ հատորի (1892, Մոսկվա) մասին տպագրված միակ գրախոսականն է, որը, սակայն, ըստ էության չի ներկայացնում ողջ ժողովածուի արժանիքները:

1894 թ. Հովհ. Թումանյանի, Արշ. Բարխուդարյանի և Փիլ. Վարդազարյանի նախաձեռնությամբ հրատարակվում է «Հորիզոն» հանդեսի առաջին գիրքը, որը, սակայն, հաջողություն չի ունենում: Հանդեսին նվիրված գրախոսական¹⁰ է տպագրվում «Տարագում», որն ուներ ընդգծված միտում: Խոսելով Թումանյանի՝ Ջ. Բայրոնից կատարած թարգմանության մասին՝ հոդվածագիր Եր. Պալյանը հեգնախառն անլրջությամբ գրում է. ««Չայլո Հարոլդի երգի» թարգմանության մասին ավելորդ է խոսել- հսկա Բայրոնը մի գաձաձ է դուրս եկել պարոնի շաբլոնի միջից...»:¹¹ Առանց հիմնավորելու անձնական տեսակետը և մատնանշելու ինչ-որ թերություններ, անհամապատասխանություններ՝ գրախոսն անցնում է Թումանյանի՝ հանդեսում տպագրված մյուս ստեղծագործություններին. ««Քաջերի կյանքից» (նույն հեղինակի) չգիտեմ ի՞նչ բան է, նախերգանք «Վերք Հայաստանիի», թե՛ այլ բան, իսկ Չորագետի նկարագրությունն էլ նմանողություն է Աբովյանի Չանգու գետի նկարագրության... «Հին օրհնություն» ոտանավորը (նույն հեղինակի) արտահայտում է հեղինակի սիրահարությունը դեպի իր պապերը: «Խելոք պապերի» խրատները շատ են դուր գալիս պարոնին...»:¹²

Միակ «բարի» խոսքը ուղղվում է «Հառաչանքին». «Մի հառաչանքը» ամենքից աջողն է: Բայց պարոնի ոտանավորները էտիկետների բնավորություն են կրում... «Աղքատի պատիվը» (նույն հեղինակի) ան-

10 Ավ. Արասխանյանը «Մուրճի» հմ. 2-ում տպագրում է «Վեցամյա գրական ժողովածուների առիթով» հոդվածը, որը գրեթե ամբողջությամբ քննում է Հ. Թումանյան - Փ. Վարդազարյան - Ավ. Արասխանյան հարաբերությունները, ժխտում «Հորիզոնի» հրատարակության անհրաժեշտությունը՝ մեկնաբանելով, որ հանդեսը ոչ մի սերնդի, «շկոլայի» կամ նույնիսկ խմբի ձգտումների հետ առնչություն չունի:

11 Տարագ, հմ. 3, Թիֆլիս, 1895, էջ 43:

12 Նույն տեղում, էջ 43-44:

համ պատմվածք է, զուրկ որևէ նշանակությունից: «Երկինք և երկիր» (նույն հեղինակի) նյութը շատ տարածված, անզոր... «Բորչավում» (նույն հեղինակի) պարոնը սիրահարված է իր հայրենիքի վրա... որ կողմը դառնում եք- Դսեղ, Չորագետ և Լոռի... «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առիթով» խորհուրդ կտայինք պարոնին դրանով չզբաղվել, և ո՞ւմ ինչ պետք, թե Սաթենիկ տիկինը ծաղիկներ էր ուզում, թե մի այլ բան...»:¹³

Թումանյանի ստեղծագործությունների նմանօրինակ մեկնաբանությունը ենթադրում է երկու բան. կամ Ե. Պալյանի քննադատական մտածողության սահմանափակությունը թույլ չի տալիս ընկալելու գեղարվեստական երկերի գաղափարական խորությունը, քննելու և արժևորելու դրանք ըստ էության, կամ «թայֆայական» չարամտությունը ստիպում է հրաժարվելու նրանց մասին որևէ անաչառ խոսք ասելուց: Այսպիսի «վերլուծությունը» որոշակիորեն ուրվագծում է ժամանակի քննադատական մտքի արտահայտություններից մեկի ընդգծված մակերեսայնությունը, գրական երկը անձնական նախասիրություններով ու ձաշակով քննելու արատավոր երևույթը: Արձանագրենք, որ նույն թվականին «Տարագի» տարբեր համարներում տպագրվում էին Պետրոս Մոձոկյանցի գրչի արտադրությունները, որոնք չափածո ձևից և բռնահանգերից բացի բանաստեղծություն հիշեցնող ոչինչ չունեին:

Նկատենք, սակայն, որ փոքր-ինչ այլ գնահատանք ենք տեսնում նույն հանդեսի մասին «Բազմավեպում» տպագրված հոդվածում: Իհարկե, այստեղ ևս ըստ էության չեն տրվում գիտական խոր վերլուծություններ, սակայն տեսանելի է բարյացակամ վերաբերմունքը: Ողջունելով հանդեսի լույսընծայումը՝ Հ. Հ. Վ. Թ. ստորագրությամբ հեղինակը լայնահայաց անկողմնակալությամբ ներկայացնում է գրքի բովանդակությունը:¹⁴ Առանց նշելու հեղինակների անունները՝ հոդվածագիրը Հ. Թումանյանի ստորագրությամբ տպագրված նյութերից յուրաքանչյուրի մասին հնչեցնում է համառոտ, բայց դրական երանգավորմամբ կարծիքներ. ««Քաջերի կեանքից» գրությունն, յորում տեղեաց և անձանց նկարագիրը մեծագոյն մասը կը գրաւեն, ժողովրդական դիւցազներու և խաղուց պատկերն է. սովորական ծանօթ նիւթ մի,

13 Նույն տեղում, էջ 44:

14 Հոդվածագիրը հանդեսի «ինքնուրույն» երկերից անդրադառնում է նաև Ծիրվանզաղեի «Ցավագարը» երկին:

որ բառական գեղեցիկ կերպով արտայայտուած է»:¹⁵ Թումանյանը, իսկապես, վառ անմիջականությամբ է տալիս առասպելական դյուցազունների հետնորդ քաջերի վարքագիծն ու բարոյական նկարագիրը՝ պահպանված ժողովրդի հավաքական հիշողության մեջ: «Լեռների հովիվը» գրախոսն անվանում է մի «զգայուն գրութին», որ «դպրոցականի մի շարադրութեան» նման հյուսված է անկեղծ անմիջականությամբ:

Ինչ վերաբերում է Բայրոնի ստեղծագործության հատվածի թարգմանությանը, ապա գրախոսը, որոշ բառերի, արտահայտությունների թարգմանության վերաբերյալ դիտողություններով հանդերձ, բարձր է գնահատում այն. «Չգիտեմ թե «Չայլ Հարօլդի երգն» անգլիերէն բնագրէն թարգմանուած է, թէ գաղղ. կամ ռուս թարգմանութենէ. բառական հարազատ է և աջող ըստ ինքեան, ի բաց առեալ մի քանի տուներ...»:¹⁶

1896 թ. առանձին գրքով հրատարակվում է «Լոռեցի Սաքոն» պոեմը (երկրորդ տարբերակը): Տպագրությանը հետևում է Ծիրվանզադեի գրախոսականը. «Պ. Թումանյանի պոեման կարդացվում է սիրով: Երա ոճը բավական սահուն է, հանգերը՝ գեղեցիկ: Հեղինակը ունեւ առհասարակ բանաստեղծական կրակ և զգացումների խորություն»:¹⁷ Պոեմը, ըստ վիպասանի, Թումանյանի «բանաստեղծական ձիրքի» «անհերքելի» ապացույցն է, թեպետ և զերծ չէ թերություններից՝ բարբառային բառերի հաճախակի կիրառություն, համեմատությունների ու պատկերավորության բացակայություն հատկապես բնության նկարագրություններում: Գրախոսության վերջում Ծիրվանզադեն մեկ անգամ ևս ընդգծում է. «Հովհաննես Թումանյանը մեր երիտասարդ քնարերգականների շարքում առաջնակարգ տեղերից մեկն է բռնում զգացումների խորության տեսակետից»:¹⁸: Ասվածից կարելի է հետևել, որ մեծանուն գրողը պոեմի արժանիքներից է համարում մարդկային ներաշխարհի վարպետ պատկերումը:

Տրամաբանորեն հակառակ կարծիքն է ներկայացնում Լեոյի՝ նույն թվի մայիսի 29-ին «Մշակ» թերթում տպագրված գրախոսականը: Չժխտելով Թումանյանի բանաստեղծական շնորհքը՝ գրախոսը բարձր

15 «Բազմավեպ», թիվ 3, մարտ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1895, էջ 111:

16 Նույն տեղում:

17 Ծիրվանզադե, Մատենախոսություն, «Տարագ», հմ. 16, Թիֆլիս, 1896, էջ 257:

18 Նույն տեղում:

է գնահատում բնության ու միջավայրի նկարագրությունները¹⁹ պոեմում. «Կտորներ կան լեռների նկարագրությունների մեջ, որոնք կատարելապես գեղեցիկ են, ներկայացնում են հիացած սրտի սիրուն նվերները բնության ահեղ տեսարաններին»:²⁰ Լեոն, այնուամենայնիվ, պոեմը համարում է նկարագրական բնույթի, բովանդակությունից զուրկ, իսկ Սաքոյի կերպարը՝ «մի աղոտ սովերագիծ»: Ըստ գրախոսի՝ կերպարի հոգեբանական զարգացումը թերի է, վախկոտությունն ու դրան հաջորդող խելագարությունը՝ անհամոզիչ: «...Հսկայական հոգին ճնշելու համար հարկավոր է հսկայական աղետ,- գրում է Լեոն:- Սաքոն մի ակնթարթում չպիտի ընկներ ահուդողի մեջ. սարսափելի ձգնաժամին «աժդահան» փախչելու մասին չէ մտածում, այլ կովի, մրցության մասին»:²¹ Այստեղ առկա է միայն նախապաշարված մարդու սարսափը, այնինչ, Լեոյի կարծիքով, առկա է մնում Սաքոյի վախկոտության, հոգեկան զարգացումների պատճառաբանված նախապայմանը: Այդուամենայնիվ, գրախոսը հույս է հայտնում, որ եթե Թումանյանը «աշխատե և բովանդակության, հոգու և մտքի մասին, կարող է տալ մեզ գեղեցիկ, կոկ և ախորժելի պատմություններ ոտանավորով»:²²

Նկատենք, որ XIX դարի 90-ական թթ. իր ուրույն տեղն էր զբաղեցնում նաև թարգմանական գրականությունը: Թումանյանը, առաջին ժողովածուից սկսած, ստեղծագործական կյանքի բոլոր փուլերում կատարել է թարգմանություններ, որոնք, ինչպես տեղին նկատել է Ա. Ինձիկյանը, «յուրովի դրսևորում են գրողի գրական ճաշակը, նրա հակումները դեպի այս կամ այն ուղղությունը կամ գեղարվեստական մեթոդը»:²³ Այսպես, 1896 թ. առանձին գրքույկով հրատարակվում են Բայրոնի «Ծիլիոնի կալանավորը» և Լեոնոնտովի «Մծիրին»: Նույն թվին «Տարագի» հմ. 6-ում տպագրվում է Ծիրվանզադեի գրախոսականը «Ծիլիոնի կալանավորի» մասին: Ինքնատիպ դիտարկումներով է սկսում գրախոսն իր ասելիքը. նա հաստատապես նշում է, որ Թումանյանը ի զորու է «բարձր բանաստեղծություններ թարգմանելու», սակայն խորհուրդ է տալիս երբեք չստանձնել այնպիսի երկերի թարգ-

19 Լեոն հուշերում գրում է, որ այդ առավելությունները նկատելու պատճառով ընդհարում է եղել իր և «Մշակի» գլխավոր աշխատակիցների միջև:

20 Լեո, «Լոռեցի Սաքոն»-պոեմա Հովհաննես Թումանյանցի, «Մշակ», հմ. 57, Թիֆլիս, 1896:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Ինձիկյան Ա., Հ. Թումանյանի կյանքը և , Երևան, 1969, էջ 503:

մանություններ, որոնց բնագրի լեզվին ծանոթ չէ: Անշուշտ, Բայրոնի հայերեն թարգմանությունը Շիրվանզադեն ցանկալի է համարում, սակայն նախընտրում է այն կատարված տեսնել մի անգլիագետ հայի ձեռքով, որը, իհարկե, ունենա նաև բանաստեղծական ձիրք: «Բայց քանի որ այդ չկա,- եզրակացնում է Շիրվանզադեն,- մնում է մեզ գոհ լինել Հովի. Թումանյանցի ներկա թարգմանությամբ: Ընդհանրապես վերցրած՝ այդ թարգմանությունը մեզ շատ հաջող է թվում ոտանավորների սահունության և թեթևության կողմից, եթե ուշադրություն չդարձնենք մի քանի մասնավոր թերությունների վրա»:²⁴

«Մծիրիի» թարգմանությունը նույնպես արժանանում է ուշադրության. 1896 թ. «Մուրձի» հմ. 5-ում լույս է տեսնում Հար. Թումանյանի գրախոսականը «Մծիրիի» երկու թարգմանությունների վերաբերյալ: Բնագիրը համադրելով Հ. Թումանյանի և Հ. Տեր-Գևորգյանի թարգմանություններին՝ գրախոսը փորձում է համեմատել ու գնահատել դրանք: Առաջին հայացքից նկատելի է՝ հողվածագիրը կառուցում է բառերի բառարանային նշանակությունից և այս տեսանկյունից երբեմն-երբեմն «հանդիմանում» Թումանյանին: Իբրև թերություն Հար. Թումանյանը նշում է նաև պոեմի տաղաչափությունը. ըստ նրա՝ թարգմանության ներքին ուժը խախտում է ոչ միատեսակ վանկերի քանակը. ի տարբերություն Տեր-Գևորգյանի, որ իր նյութը շարադրում է 10-վանկանի տողերով, Թումանյանը նույն գլխում 10-ից անցնում է 8-վանկանի տողերի՝ դրանով «խաթարելով» պոեմի ներդաշնակությունը: Գրախոսը զամանավորեն թերություն է դիտում նաև քերականական որոշ կառույցներ՝ հատկացուցչի նախադաս կիրառությունները, և ընդամենը մեկ-երկու դեպքում գոհացուցիչ համարում Թումանյանի թարգմանությունը: Գրախոսության վերջում Հար. Թումանյանը եզրակացնում է. «...Տեր-Գևորգյանի «Մծիրին» կարդացվում է մեծ ախորժանքով և կարելի է համարել հարազատ թարգմանություն թե՛ մտքի և թե՛ ոճի կողմից... Դրա հակառակն է Թումանյանցի «Մծիրին», որը բացի շատ բազմաթիվ սխալներից, չունի Լերմոնտովի գերազանց պոեմայի ոգին, այնպես որ ոչ մի սրբագրությամբ չի կարելի ուղղել: Հովի. Թումանյանցին ձանաչում էինք իբր հեղինակ հաջողակ ինքնուրույն ոտանավորների՝ մանավանդ գյուղական կյանքից, բայց նա իր «Մծիրի»-ով ու «Շիրվանի կալանավոր»-ով ապացույցներ է տալիս, որ Լերմոնտովներն ու Բայրոնները նրան մատչելի չեն»:²⁵

24 Տարագ, հմ. 16, Թիֆլիս, 1896, էջ 257:

25 Մուրձ, հմ. 5, մայիս, Թիֆլիս, 1896, էջ 652:

Ընդհանուր առմամբ նկատենք, որ 19-րդ դարի 80-ական թթ. սկսած՝ հաճախ են հանդիպում գրաքննադատության սկզբունքներն ու չափանիշներն ուսումնասիրող, դրանց շուրջ տեսակետներ արտահայտող հողվածներ²⁶, սակայն ուշագրավն այն է, որ դրանք հիմնականում մնում են իբրև տեսական դրույթներ, իսկ բուն քննադատության մեջ մեծ մասամբ երևան են հանվում նեղ անձնական, սուբյեկտիվ գնահատության չափանիշներ: Այնուամենայնիվ, 90-ական թվականներին քննադատությունը՝ որքան էլ իրարամերժ ու հակասական, նախանշեց Թումանյանի բանաստեղծական աշխարհի որոշ առանձնահատկություններ ու նրբերանգներ, որոնք հետագայում մանրակրկիտ ուսումնասիրության, խոր և հիմնարար վերլուծության հիմք դարձան:

Բանալի բառեր և արտահայտություններ – 19-րդ դարի 90-ական թթ., Հ. Թումանյան, գրաքննադատություն, գրախոսություն, թարգմանություն, անկողմնակալ գնահատություն, միտումնավորություն:

Резюме

ТУМАНЯН И КРИТИКА 90-Х ГГ. XIX ВЕКА

Е. Ж. Мнацаканян

Статья представляет оценки критики 90-ых годов XIX века, данные творчеству Туманяна, которые раскрывают тенденции развития не только мыслей Туманяна, но также литературно-критической мысли. Критика 90-х годов, объединяясь с журналистикой и публицистикой, постепенно пыталась определить область, предмет и проблемы своего исследования. Для критики, руководствующейся беспристрастно, только показателями искусства, однако, требовалось время. Литературно-художественные разные явления со стороны критики принимались неоднородно. Столкнулись разные течения, мнения. Это не означает, конечно, что на арене не были специалисты-критики. Достаточно

26 Բաֆֆի, Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը», «Մշակ», հմ.հմ. 141,142, 144, 145, 148-150, Թիֆլիս, 1883, Լեո, Կրիտիկան մեր մամուլի մեջ, «Մշակ», հմ. 118-119, Գ. Ենգիբարյան, Հ. Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» մի քննադատության առիթով, «Արձագանք», հմ. 45, Թիֆլիս, 1887, էջ 708-711, Շիրվանզադե, Իմ կրիտիկոսներին, «Արձագանք», հմ. 8, 1891, էջ 1-3 և այլն:

вспомнить похвальные статьи Абегиана М., Манвеляна Л., Агаяна Г., Ширванзаде о творчестве Туманяна. Они предугадали некоторые особенности и оттенки поэтического мира Туманяна, которые позднее стали основами тщательного изучения, глубокого и фундаментального анализа.

Summary
**LITERARY CRITICISM AND TOUMANYAN IN THE 90s
 OF XIX CENTURY**
 E.Zh.Mnatsakanyan

The article focuses on the appraisals towards Toumanyan's works in the 90s of the XIX century which reveal not only the developmental trends in Toumanyan's works but also in the thought of the time. Merging with journalism and public speaking of 90s criticism of the time was gradually trying to decide on its field of study, aims and objectives. For unbiased criticism, led only by the criteria of fine art, time was necessary. Different phenomena had different acceptance from the side of criticism. Different currents, opinions collided. Of course, this doesn't mean that there wasn't professional criticism in the field. It's enough to remember the highly appraisal of Toumanyan's works in the articles by M. Abeghyan, L. Manvaelyan, Gh. Aghayan, Shirvanzade. These highlighted some peculiarities and shades in Toumanyan's poetic world, which later served as a basis for deep and foundational analysis.

**ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ
 «ԱՆՅՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ» ՎԵՊԻ ԺԱՆՐԸ**

«Մեհեան»-ի առաջին համարում տպագրված «Գրական հանգանակ»-ում Կոստան Զարեյանը շարադրում է գրականության նորոգման իր ծրագիրը, որին նա հավատարիմ է մնում գրական կյանքի ողջ ընթացքում: Հանգանակի կետերից մեկը՝ «Ինքնուրոյնութիւն եւ անձնականութիւն ձեւի մէջ», հետաքրքիր դրսևորում է ունենում մանավանդ նրա գեղարվեստական արձակում: Այս առումով քննենք «Անցորդը եւ իր ձամբան» վեպի ժանրային առանձնահատկությունները:

Ամենից առաջ աչքի է ընկնում դասական վեպին բնորոշ պատումի բացակայությունը: Ճիշտ է, «Անցորդը եւ իր ձամբան» վեպում կա գործողության որոշակի ընթացք. Անցորդը իր ընտանիքով վերադառնում է հայրենիք՝ այստեղ հիմնավորվելու մտադրությամբ, բայց իշխանության անհանդուրժողական քաղաքականության պատճառով երկու տարի հետո հեռանում է: Սակայն վեպի նպատակը ամենևին էլ հերոսի ընտանիքի ողիսականի պատմությունը չէ, այլ ներկայացնել 20-ականների Հայաստանը, ձանաչել ժողովրդին, փնտրել ու հասկանալ հայի էության գաղտնիքը: Այս փնտրտուքը հեղինակին ստիպում է անդրադառնալ և՛ մեր պատմությանը, և՛ մշակույթին, և՛ այլ երկրների՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքին, ինչպես նաև Հայի՝ սեփական երկրի և այլ ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքին: Ողջ վեպի ընթացքում հեղինակի պատումը տարբեր երանգներ է ստանում. այն երբեմն ինքնակենսագրություն է, երբեմն՝ հետազոտություն, երբ գրողը քննում է մեր պատմությունը՝ օգտագործելով դեպի Հայաստան և Հայաստանում ձամփորդելու հնարավորությունը: Հեղինակը խորհրդածում է, փիլիսոփայում: Կարելի է եզրակացնել, որ Հայաստանում լինելը և հայ մարդուն ձանաչելը Զարեյանին հնարավորություն են տալիս իրագործելու հիմնական նպատակը՝ ներկայացնել իր խոհերը հայ մարդու մասին, մեր երկրի ու նրա մշակույթի յուրօրինակության մասին: Իր մտքերն ու զգացմունքները գրողը չէր կարող պարփակել դասական վեպի սահմաններում, քանի որ այդ դեպքում չէր կարողանա հասնել իր գերագույն նպատակին՝ ընթերցողին մղել տեսնելու,